Կոռուպցիայի ընկալման համաթիվ 2024.

Կոռուպցիան կործանարար դեր է խաղում կլիմայական ճգնաժամում

Կոռուպցիան սպառնում է կյանքեր փրկող կլիմայական հիմնադրամներին ամբողջ աշխարհում. ավելի լավ պաշտպանական մեխանիզմները կենսական նշանակություն ունեն միլիարդավոր խոցելի մարդկանց պաշտպանելու համար

Բեռլին, 11 փետրվարի, 2025 թ. - Համաձայն Թրանսփարենսի Ինթերնեշնլ կազմակերպության կողմից այսօր հրապարակված 2024 թ. Կոռուպցիայի ընկալման համաթվի (ԿԸՀ)՝ կոռուպցիայի համաշխարհային մակարդակը շարունակում է մնալ անհանգստացնող բարձր, իսկ այն նվազեցնելու ջանքերը՝ գնալով թուլացող: Զեկույցը բացահայտել է կոռուպցիայի անհանգստացնող մակարդակներ ամբողջ աշխարհում. երկրների ավելի քան երկու երրորդի ԿԸՀ արժեքները 0-ից (բացարձակապես կոռումպացված) 100 (բացարձակապես մաքուր) սանդղակի վրա 50 միավորից ցածր են: Համաթվի համաշխարհային միջին ցուցանիշը մնացել է անփոփոխ՝ 43 միավոր, ինչն ընդգծում է կոռուպցիայի դեմ հրատապ գործողությունների անհրաժեշտությունը և ահազանգում կլիմայական արդյունավետ գործողությունների իրականացման գլոբալ որոշիչ խոչընդոտի մասին:

Ջերմաստիճանային նորանոր ռեկորդներով ուղեկցվող գլոբալ տաքացման և անոմալ եղանակային երևույթների, ժողովրդավարության քայքայման և կլիմայական գլոբալ առաջնորդության անկման պայմաններում աշխարհը կլիմայական ճգնաժամի դեմ իր պայքարում հայտնվել է փակուղում: Կոռուպցիան այս պայքարը դարձնում է շատ ավելի դժվար, և միջազգային հանրությունը պետք է անդրադառնա կոռուպցիայի և կլիմայական ճգնաժամի միջև եղած կապին:

ԿԸՀ 2024-ի տվյալները ցույց են տալիս, որ միջազգային կլիմայական գործողություններում առավել ակտիվ ներգրավված երկրների մեծ մասը՝ ներառյալ կլիմայի փոփոխությունից խոցելի երկրները և միջազգային գագաթնաժողովները, մասնավորապես ՄԱԿ-ի Կլիմայի փոփոխության համաժողովը (COP) հյուրընկալող երկրներն ունեն ցածր և/կամ նվազող ԿԸՀ ցուցանիշներ: Կոռուպցիան խոչընդոտում է կլիմայական արդյունավետ գործողություններին՝ սահմանափակելով հավակնոտ քաղաքականությունների որդեգրումը: Թրանսփարենսի Ինթերնեշնլի վերջերս հրապարակված զեկույցն ընդգծում է նավթային և գազային ոլորտի լոբբիստների նշանակալի ազդեցությունը COP-ի նման միջոցառումներում, որն իր ազդեցությունն է ունենում նաև աշխարհի քաղաքական կենտրոնների վրա:
Թրանսփարենսի Ինթերնեշնլի Խորհրդի նախագահ Ֆրանսուա Վալերիանը նշում է.

«Կոռուպցիան գլոբալ վարգացող սպառնալիք է, որը շատ ավելին է, քան վարգացման խոչընդոտում. այն հանդիսանում է ժողովրդավարության անկման, անկայունության և մարդու իրավունքների խախտումների հիմնական պատճառը: Միջազգային հանրությունն ու յուրաքանչյուր երկիր պետք է կոռուպցիայի դեմ պայքարը դարձնի առաջնահերթություն երկարաժամկետ հեռանկարում: Սա կարևոր քայլ է ավտորիտարիզմի դեմ պայքարելու և խաղաղ, ապատ ու կայուն աշխարհ ապահովելու համար: Կոռուպցիայի ընկալման համաթվի այս տարվա վտանգավոր միտումները վկայում են, որ համաշխարհային մակարդակում կոռուպցիան նվազեցնելու համար կոնկրետ գործողությունների ժամանակն է»:

Թրանսփարենսի Ինթերնեշնլի գործադիր տնօրեն Մաիրա Մարտինին շեշտում է.

«Մենք պետք է անհապաղ արմատախիլ անենք կոռուպցիան, քանի դեռ այն ամբողջությամբ չի խաթարել կլիմայի դեմ փոփոխությանն ուղղված արդյունավետ քայլերը: Այսօր կոռումպացված ուժերը ոչ միայն ձևավորում, այլ նաև հաճախ թելադրում են քաղաքական օրակարգը, կազմաքանդում վերահսկողության մեխանիզմները և լռեցնում լրագրողներին, ակտիվիստներին ու բոլոր նրանց, ովքեր պայքարում են հավասարության և կայունության համար: Իրական կլիմայական դիմադրողականությունը պահանջում է այս սպառնալիքների դեմ ուղղակի և վճռական պայքար: Բազմաթիվ խոցելի մարդիկ ողջ աշխարհում սպասում են այդ գործողություններին»:

Գրինփիս Ինթերնեշնլի գործադիր տնօրեն Մադս Քրիստենսենը հավելում է.
«Այս տարվա վերլուծությունը կրկին ցույց տվեց, որ վառելիքի արդյունահանման հետ կապված կոռուպցիան խոչընդոտում է կլիմայական ջանքերին, այդ թվում՝ ԱՄՆ-ում: Ամբողջ աշխարհում հասարակությունները պահանջում են կլիմայական գործողություններ իրենց կառավարություններից, բայց այդ ձայները նորից ու նորից ճնշվում են նավթային և գազային ընկերությունների կողմից, որոնք միլիարդավոր դոլարներ են ծախսում քննադատներին ու ակտիվիստներին լռեցնելու, իշխանություն գնելու և մեր ընտանիքների ու մոլորակի պաշտպանիչ մեխանիզմները կազմաքանդելու վրա: Գրինփիսի կազմակերպություններն ու մեր դաշնակիցները կանգնած են այդպիսի սպառնալիքի առաջ նավթային և գազային խողովակաշարերի հսկա Energy Transfer ընկերության կողմից, որը փորձում է մեծածավալ և նենգ դատական գործընթացի միջոցով ջնջել մեզ ԱՄՆ քարտեզի վրայից: Մենք բոլորս, հոգ տանելով ապագայի մասին, պետք է դիմադրենք այս կորպորատիվ ճնշումներին՝ անկախ նրանից, թե ինչ գին դրա համար կվճարենք»:

Կոռուպցիան և կլիմայական ճգնաժամը

Կոռուպցիայի ընկալման համաթիվը (ԿԸՀ) ընդգծում է միլիարդավոր դոլարների կլիմայական հիմնադրամների (ֆոնդերի) գողության կամ անարդյունավետ օգտագործման վտանգը:

- Կլիմայի փոփոխությունից մեծապես խոցելի երկրների մեծ մասի ԿԸՀ արժեքը 50 միավորից ցածր է: Սա նշանակում է, որ հսկայական թվով մարդիկ ենթարկվում են անտեղի վտանգի, քանի որ կոռուպցիան խաթարում է նրանց պաշտպանելու համար նախատեսված կլիմայական ծրագրերը: Այս իրավիճակը ընդգծում է թափանցիկության և հաշվետվողականության խիստ անհրաժեշտությունը ապահովելու համար, որ այդ ֆինանսավորումը արդյունավետորեն օգտագործվի:

- Թրանսփարենսի Ինթերնեշնլի վերջին ուսումնասիրությունները ցույց են տալիս, թե ինչպես կարող է կոռուպցիան խաթարել «արդար անցումը» դեպի զուտ զրոյական արտանետումներ՝ առանձնացնելով կոնկրետ օրինակներ **Հարավաֆրիկյան Հանրապետությունից** (41), **Վիետնամից** (40) և **Ինդոնեզիայից** (37), որտեղ անբավարար վերահսկողության մեխանիզմները ստեղծել են հնարավորություններ անբարեխիղճ դերակատարների համար:

- Համաձայն **Հարավաֆրիկյան Հանրապետությունում** (41) Eskom պետական էներգամատակարար ընկերության նախկին գործադիր տնօրենի՝ յուրաքանչյուր ամիս

մոտ մեկ միլիարդ ռանդ (ավելի քան 56 միլիոն ԱՄՆ դոլար) է գողացվում ընկերությունից:

- Կլիմայական ճգնաժամի ամենածանր հետևանքները կրող երկրներն ունեն ԿԸՀ ամենացածր միավորները՝ ներառյալ **Հարավային Սուդանը** (8), **Սոմալին** (9) և **Վենեսուելան** (10): **Սոմալիում** կլիմայի փոփոխությունը լուրջ վնաս է հասցրել երկրի գյուղատնտեսությանը և խորացրել արդեն 30 տարի շարունակվող հակամարտությունը:

Զեկույցը նաև բացահայտել է, թե որքանով են կլիմայական դիվանագիտության հիմնական խաղացողները պայքարում կոռուպցիայի դեմ, որը հեղինակների կարծիքով խաթարում է բազմակողմանի համագործակցության արդյունավետությունը, այդ թվում՝ COP բանակցությունների գործընթացը:

- **Ադրբեջանը**, որի կողմից հյուրընկալվող COP29-ին մուտքի թույլտվություն է ստացել առնվազն 1,773 նավթագազային լոբբիստ, ստացել է ընդամենը 22 միավոր:

- COP30-ը հյուրընկալող **Բրազիլիան** պարտավորություն ունի մինչ 2035 թվականը ապահովել 1.3 տրիլիոն դոլար կլիմայական ֆինանսավորման գծով, սակայն այս տարվա նրա կոռուպցիայի ընկալման համաթիվը հասավ իր պատմական ամենացածր արժեքին՝ 34 միավոր:

- G20 ղեկավարների գագաթնաժողովի հյուրընկալող **Հարավաֆրիկյան Հանրապետության** (41) ԿԸՀ-ն 2019-ից ի վեր նվազել է երեք միավորով:

- Համաժողովներ հյուրընկալող որոշ երկրներ, որոնց ԿԸՀ միավորները միջինից ցածր են, նաև նպաստել են այդ համաժողովների ոչ բաց լինելուն՝ սահմանափակելով թափանցիկությունը և հասարակական կազմակերպությունների մասնակցությունը: Սա լուրջ մարտահրավեր է արդյունավետ կլիմայական քաղաքականության համար, և անհրաժեշտ է հատուկ ուշադրություն դարձնել այս խնդրին՝ պատրաստվելով COP30-ին Բրազիլիայում և G20-ի ղեկավարների գագաթնաժողովին Հարավաֆրիկյան Հանրապետությունում:

- Կլիմայի քաղաքականությանը խոչընդոտող անհարկի ազդեցությունը կարող է տեղ գտնել կոռուպցիայի ինչպես բարձր, այնպես էլ ցածր մակարդակ ունեցող երկրներում: Այնուամենայնիվ, հարուստ, զարգացած երկրներում է, որ այդ ազդեցությունն ունի ավելի լուրջ հետևանքներ, քանի որ խաթարվում է հավակնոտ նպատակներ սահմանելու, արտանետումները կրճատելու և գլոբալ առումով դիմադրողականություն ձևավորելու նրանց աշխատանքը: Հովանոցային (Umbrella) խմբի երեք անդամ երկրների՝ **ԱՄՆ-ի** (65), **Կանադայի** (75) և **Նոր Զելանդիայի** (83) ԿԸՀ միավորները զգալիորեն նվազել են:

ԿԸՀ-ն նաև ընդգծում է կլիմայական կոռուպցիայի մարդկային կյանքի արժեքը:

- Ապօրինի հողազավթումների դեմ պայքարողները և բնապահպանները հաճախ կանգնած են կլիմայական ճգնաժամի դեմ պայքարի առաջին գծում, սակայն նրանց աշխատանքը հանգեցնում է վերջիններիս ահաբեկման, բռնության և անգամ սպանության: Սա առավել տարածված է կոռուպցիայի խորը խնդիրներ ունեցող երկրներում: Սկսած 2019 թվականից 1,013 բնապահպանների սպանություններից գրեթե բոլորը տեղի են ունեցել այն երկրներում, որտեղ ԿԸՀ միավորները ցածր են 50-ից:

Կոռուպցիայի իրավիճակն աշխարհում

ԿԸՀ-ն դասակարգում է 180 երկիր և տարածքներ՝ ըստ հանրային ոլորտում կոռուպցիայի ընկալման մակարդակի՝ 0-ից (բացարձակապես կոռումպացված) մինչև 100 (բացարձակապես մաքուր) սանդղակով:

- Մոտ 6.8 միլիարդ մարդ ապրում է այն երկրներում, որոնց ԿԸՀ արժեքը 50-ից ցածր է: Սա համարժեք է աշխարհի 8 միլիարդ բնակչության 85%-ին:

- Արդեն յոթերորդ տարին անընդմեջ **Դանիան** գլխավորում է ցուցակը (90 միավոր), որին գրեթե հավասար արդյունքով հաջորդում է **Ֆինլանդիան** (88) և **Սինգապուրը** (84):

- Ամենացածր ցուցանիշներն արձանագրվել են հիմնականում անկայուն և հակամարտություններից տուժած երկրներում, ինչպիսիք են՝ **Հարավային Սուդանը** (8), **Սոմալին** (9), **Վենեսուելան** (10), **Սիրիան** (12), **Լիբիան** (13), **Էրիթրեան** (13), **Եմենը** (13) և **Հասարակածային Գվինեան** (13):

- Հետազոտությամբ ընդգրկված երկրների ավելի քան քառորդը (47 երկիր) գրանցել է համաթվի իր պատմական ամենացածր ցուցանիշը, այդ թվում՝ **Ավստրիան** (67), **Բանգլադեշը** (23), **Բրազիլիան** (34), **Կուբան** (41), **Ֆրանսիան** (67), **Գերմանիան** (75), **Հաիթին** (16), **Հունգարիան** (41), **Իրանը** (23), **Մեքսիկան** (26), **Ռուսաստանը** (22), **Հարավային Սուդանը** (8), **Շվեյցարիան** (81), **ԱՄՆ-ն** (65) և **Վենեսուելան** (10):

Վերջին 5 տարվա ընթացքում 7 երկիր էական առաջընթաց է գրանցել.

- Դրանք են **Կոտ դ'Իվուարը** (45), **Դոմինիկյան Հանրապետությունը** (36), **Կոսովոն** (44), **Քուվեյթը** (46), **Մալդիվները** (38), **Մոլդովան** (43) և **Զամբիան** (39):

Վերջին 5 տարվա ընթացքում 13 երկրում արձանագրվել է էական անկում.

- Այդ երկրներն են՝ **Ավստրիան** (67), **Բելառուսը** (33), **Բելգիան** (69), **Էլ Սալվադորը** (30), **Ֆրանսիան** (67), **Ղրղզստանը** (25), **Լիբանանը** (22), **Մյանման** (16), **Նիկարագուան** (14), **Ռուսաստանը** (22), **Շրի Լանկան** (32), **Միացյալ Թագավորությունը** (71) և **Վենեսուելան** (10):

Կոռուպցիայի ընկալման համաթվի մասին

Սկսած 1995 թ. իր առաջին հրապարակումից՝ Կոռուպցիայի ընկալման համաթիվը դարձավ հանրային ոլորտում կոռուպցիայի վերաբերյալ համաշխարհային առաջատար ցուցիչը: 2023 թվականի համաթիվը գնահատել է աշխարհի 180 երկրները և տարածքները՝ ելնելով հանրային ոլորտում կոռուպցիայի ընկալումից և օգտագործելով տվյալներ 13 արտաքին աղբյուրներից, որոնց թվում՝ Համաշխարհային Բանկը, Համաշխարհային տնտեսական ֆորումը, ռիսկեր գնահատող և խորհրդատվական մասնավոր ընկերությունները, հետազոտական կենտրոնները և այլն: Գնահատականներն արտացոլում են փորձագետների և գործարարների ընկալումները:

ԿԸՀ-ի հաշվարկման գործընթացը կանոնավոր կերպով վերանայվում է (վերջին անգամ՝ 2017 թվականին Եվրոպական հանձնաժողովի համատեղ հետազոտական կենտրոնի կողմից) համոզվելու համար, որ այն ունի հնարավորինս կուռ և համահունչ ներքին տրամաբանություն: 2012 թվականից հետո ԿԸՀ յուրաքանչյուր տարվա գնահատականները համեմատելի են այլ տարվա գնահատականների հետ: Ավելի շատ տեղեկատվության համար տե՛ս ԿԸՀ այբուբենը. ինչպես է հաշվարկվում Կոռուպցիայի ընկալման համաթիվը հոդվածը: